ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՍՏՈՒԳՈՒՄ

2024

ԺԵՍՏԵՐԻ ԼԵԶՈՒ

ԹԵՍՏ 1

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

1 **Ո՞վ է առաջին անգամ կիրառել ժեստերը «Խուլերի» ուսուցման համակարգում:**

1) Ս. Հայնիկեն
2) Մ. դե Լէպպեն
3) Ռաֆֆելը
4) Պերեյրան

2 **Ովքե՞ր են հիմք դրել մատնախոսության այբուբենի կիրառմանը:**

1) Չլսող մարդիկ
2) Լռակյաց վանականները
3) Արվեստագետները
4) Նավաստիները

3 **Ո՞վ է բացահայտել ժեստի կառուցվածքը.**

1) Ֆ. Պերեյրա
2) ՈՒ. Ստոկուի
3) Մ. Դե Լ'էպպե
4) Մ. Բրեննոն

4 **Ո՞ր բառն է համապատասխանում «մատնախոսություն» եզրույթին:**

1) Դակտիլոգրաֆիա
2) Դակտիլոլոգիա
3) Դեմոլոգիա
4) Դերմոգրաֆիա

5 **Ի՞նչ է դակտիլեմը՝**

1) Մատնաձև
2) Մատնահետք
3) Մատնատառ
4) Մատնանշան

6 **Աշխարհում քանի՞ մատնախոսության այբունենի տարբերակ կա:**

1) 78
2) 56
3) 24
4) 43

7 Ո՞ր թվականին է ստեղծվել հայերեն մատնախոսության այբուբենը։

1) 1960
2) 1860
3) 1940
4) 1840

8 Ո՞ր լեզվի հիմքի վրա է կառուցվել հայերեն մատնախոսության այբուբենը։

1) Լատիներենի
2) Ռուսերենի
3) Ֆրանսերենի
4) Գերմաներենի

9 Նշվածներից, ո՞ր մատնատառն է հայերեն մատնախոսության այբուբենում ուրվագծվում օդում։

1) Ա
2) Զ
3) Մ
4) Ե

10 Նշվածներից, ո՞ր մատնատառի ուրվագիծը նման չի մյուսներին։

1) Ս
2) Մ
3) Տ
4) Շ

11 Քան՞ի մատնատառ կա հայերեն մատնախոսության այբուբենում։

1) 38
2) 32
3) 36
4) 39

12 Ինչպիսի՞ն չի լինում մատնախոսության այբուբենները։

1) Տառային
2) Վանկային
3) Կոմբինացված
4) Ուրվագծային

13 **Ի՞նչ է մատնախոսությունը:**

1) Հաղորդակցման յուրահատուկ կինետիկ ձև
2) Հաղորդակցման ինքնուրույն համակարգ
3) Պատկերագիր
4) Հաղորդակցման միջազգային համակար

14 **Ո՞ր մատնատառն է ունիվերսալ:**

1) Մ
2) Կ
3) Ա
4) Վ

15 **Ինչպե՞ս են բառերը մատնախոսվում:**

1) Համաձայն տվյալ լեզվի քերականական կանոններին
2) Համաձայն լեզվի հնչյունահնչույթային կանոններին
3) Համաձայն բանավոր արտաբերման կանոններին
4) Չի համապատասխանում բառային խոսքի կանոններին:

16 **Ինչպե՞ս է անհրաժեշտ մատնախոսել:**

1) Սահուն անցնել մեկ մատնատառից մյուսին:
2) Յուրաքանչյուր մատնատառից հետո վերադառնալ ելման դիրք:
3) Մատնախոսել սեփական հարմարավետությամբ և արագությամբ:
4) Հատիկիատիկ ցույց տալով մատնատառերը:

17 **Ժեստերի լեզվի գրությունը կոչվում է .**

1) Ժեստային պատկերագիր
2) Ժեստային նոտացիա
3) Ժեստային տառագրություն
4) Ժեստային սիմվոլիկա

18 **Ինչպե՞ս են սովորաբար հեռուստատեսությամբ կատարվում թարգմանությունները:**

1) Մատնախոսությամբ
2) Ազգային ժեստերի լեզվով
3) Պատճենող ժեստերի լեզվով
4) Միջազգային ժեստերի լեզվով

19 **Ո՞ր ձեռքով է սովորաբար կատարվում մատնախոսությունը:**

1) Աջով
2) Ձախով
3) Սկզբում աջով, ապա ձախով
4) Յուրաքանչյուր մատնատառ ունի իր ձեռքը

20 **Ո՞ր դեպքում լսողության խանգարումներ ունեցող անձը չի կիրառում մատախոսությունը:**

1) Երբ ուզում է ճշգրտել բառի ուղղագրությունը
2) Երբ ուզում է ճշգրտել բառի ուղղախոսությունը
3) Երբ անհրաժեշտ է նշել հատուկ անուններ կամ եզրույթներ
4) Երբ չկա ժեստային համարժեքը կամ չգիտի ժեստը

21 **Ո՞րն է համարվում չլսող մարդկանց անմիջական հաղորդակցման լեզուն:**

1) Պատճենային ժեստերի լեզու
2) Նմանակող ժեստեր
3) Բնական ժեստեր
4) Ազգային ժեստերի լեզու

22 **Ինչպե՞ս է կոչվում միջազգային ժեստերի լեզուն:**

1) Էսպերանտոն
2) Իդոն
3) Ջեսթունո
4) Ժեստոն

23 **Ո՞ր լեզվից է առաջացել Դակտիլոլոգիա եզրույթը:**

1) Ռուսերենից
2) Հունարենից
3) Ֆրանսերենից
4) Լատիներենից

24 **Ինչպե՞ս են կիրառվում ժեստերը պատճենող ժեստերի լեզվում:**

1) Ուղիղ ձևով, բառային խոսքին համատեղ
2) Ուղիղ ձևով, առանց բառային խոսքի
3) Անկախ շարահյուսությամբ, առանց բառային խոսքի
4) Անկախ շարահյուսությամբ, բառային խոսքին համատեղ

25 **Ի՞նչ է ժեստը։**

1) Յուրահատուկ պատկերագիր
2) Իմաստավորված շարժույթ
3) Յուրահատուկ հիերոգլիֆ
4) Իմաստավորված գրաֆիկական պատկեր

26 **Ի՞նչ տեսակի ժեստեր չեն լինում։**

1) Սիմվոլիկ
2) Պատկերող
3) Ընդօրինակող/նմանակող
4) Գծագրող

27 **Քան՞ի բաղադրիչ ունի հայերեն ժեստի կազմությունը։**

1) 3
2) 2
3) 5
4) 4

28 **Ժեստի ո՞ր բաղադրիչն է համարվում ոչ մանուալ կոմպոնենտ։**

1) Շարժման ուղղությունը
2) Դիմախաղը
3) Տեղայնացումը
4) Մատնաձևը

29 **Նշվածներից ո՞ր մատնատառն է դառնում ժեստ, եթե արտահայտվում է դիմախաղով։**

1) Ջ
2) Կ
3) Ա
4) Ն

30 **Նշվածներից ո՞րը մատնատառը չի հանդիպում այլ լեզուներում և համարվում է զուտ հայերեն։**

1) Ճ
2) Եվ
3) Յ
4) Ը

31 **Ո՞ր ժեստերը չեն մտնում հայերեն ժեստային բառապաշարի մեջ:**

1) Ժեստ-նորաբանություն
2) Ժեստ- հնաբանություն
3) Սպորտային ժեստեր
4) Երիտասարդական-սլենգ ժեստեր

32 **Ժեստերի լեզվի ո՞ր ենթախումբը չի կազմում հայերեն ժեստերի լեզվի բառապաշարի մաս:**

1) Ունիվերսալ ժեստ
2) Ազգային ժեստ
3) Իդեոմատիկ ժեստ
4) Պատկերող ժեստ

33 **Սուրդոմանկավարժության ո՞ր ուղղության կողմնակիցներն են ժեստերի լեզուն դիտարկում որպես ուսուցման հիմնական լեզու.**

1) Մեյնստրիմինգի/ ներառականության
2) Տոտալ հաղորդակցման համակարգ
3) Ժեստաբառային երկլեզու ուսուցման
4) Բանավոր ուսուցման

34 **Ժեստերի լեզվի բառարանների ո՞ր տեսակն է ավելի կիրառական հատուկ դպրոցում:**

1) Մատնաձևային
2) Թեմատիկ
3) Այբբենական
4) Էլեկտրոնային

35 **Ո՞ր սկզբունքն է համարվում արդյունավետ ժեստերի լեզվի ուսուցման ընթացքում:**

1) Ժեստ-իմաստ-բառ
2) Ժեստ-մատնախոսություն-իմաստ
3) Բառ-մատնախոսություն-իմաստ
4) Մատնախոսություն- բառ-իմաստ

36 **Ի՞նչը ժեստերի առանձահատկության մեջ չի մտնում։**

1) Բազմաբառություն
2) Պատկերավորություն
3) Բազմիմաստություն
4) Արտահայտչականություն

37 **Որտե՞ղ է առավել ցայտուն արտահայտվում ժեստերի լեզվի առանձնահատկությունը։**

1) Զևաբանության մեջ
2) Շարահյուսության մեջ
3) Բառապաշարի մեջ
4) Տարածական քերականության մեջ

38 **Ո՞րն է համարվում ժեստային երկլեզվություն։**

1) Երբ խոսում են ազգային և բառային լեզուներով
2) Երբ խոսում են բառային և պատճենային լեզուներով
3) Երբ խոսում են ազգային և պատճենային լեզուներով
4) Երբ խոսում են ազգային ժեստերի և միջազգային ժեստերի լեզուներով

39 **Ե՞րբ է հիմնականում կիրառվում պատճենային ժեստերի լեզուն։**

1) Առօրյա ժեստային հաղորդակցման ժամանակ
2) Տեղեկատվության ընկալումը հեշտացնելու անհրաժեշտության դեպքում
3) Տարբեր ժեստային լեզուներով հաղորդակցման ժամանակ
4) Պաշտոնական տեղեկատվությունը թարգմանելու ժամանակ

40 **Ինչպե՞ս ժեստերի լեզվում չի արտահայտվում հոգտնակի թիվի իմաստը։**

1) Ժեստի ձևափոխումով
2) Ժեստի կրկնությունով
3) Միաձեռք ժեստի երկու ձեռքով կատարումով
4) «շատ», «տարբեր» օգնող ժեստերի կիրառումով

41 **Ներկայացված տարբերակներից ո՞րը ժեստի կազմության բաղադրիչ չէ։**

1) Շարժման բնույթ
2) Շարժման ուղղություն
3) Շարժման արագություն
4) Մատնաձև

42 **Ո՞րն է պատշգամբ բառի նույնանուն ժեստը։**

1) Աբովյան
2) Դիլիջան
3) Իջևան
4) Հրազդան

43 **Ո՞ր ժեստի անվանումն է համապատասխանում նկարագրին. Երկու ձեռքով ցույց է տրվում երեք մատնաձևը, ափերը դուրս, միաժամանակ շարժել դեպի առաջ՝ դարձնելով չ մատնաձև։**

1) Հույս
2) Հավատ
3) Կարոտ
4) Երջանկություն

44 **Ինչպե՞ս է արտահայտվում Ժամանակը հայերեն ժեստերի լեզվում։**

1) Հիմնական ժեստին «Եղել է, կլինի, հիմա» հավելյալ ժեստի ավելացումով
2) Ժամանակ արտահայտող ժեստին համադրելով մատնասխոսվող վերջավորություն
3) Ժեստերի լեզվում ժամանակը չի արտահայտվում, պարզ է դառնում ենթատեքստից
4) Ժամանակ արտահայտող բառերը մատնախոսվում են

45 **Ինչպե՞ս են ցույց տրվում ածանցները, բառի վերջավորությունները հայերեն ժեստերի լեզվում.**

1) Մատնախոսվում են
2) Պայմանական նշաններով
3) Ռուսերենից փոխառնված նշաններով
4) Չեն ցուցադրվում

46 Ո՞ր տարբերակն է համապատասխանում մատնախոսությամբ ներկայացված բառին:



1) Բարերարություն
2) Բարեգործություն
3) Բարեկամություն
4) Բարեկրթություն

47 Ո՞ր տարբերակն է համապատասխանում մատնախոսությամբ ներկայացված բառին:

1) Լուսամուտ
2) Լուսաբաց
3) Արևաբաց
4) Արևամուտ

48 **Ո՞ր տարբերակն է համապատասխանում մատնախոսությամբ ներկայացված բառին։**



1) Կարմիր կակաչ
2) Կապույտ զգեստ
3) Կարմիր զատիկ
4) Կապույտ մատիտ

49 **Ինչպե՞ս են բառ-նորաբանությունները ցուցադրվում ժեստով։**

1) Ստեղծվում և շրջանառվում են նոր ժեստեր
2) Բացատրվում են ամբողջական նախադասություններով
3) Մատնախոսվում են
4) Նկարագրվում են

50 **Ինչպե՞ս է ցուցադրվում ժեստերում 3-րդ դեմքը։**

1) Շարժումը կատարվում է դեպի խոսողը (իր անձը)։
2) Շարժումը կատարվում է դեպի առաջ։
3) Շարժումը կատարվում է դեպի կողմ։
4) Ժեստերում չի կարող փոխանցվել դեմքը։

51 **Նշված տարբերակներից ո՞րն է ճիշտ:**



1) Եկա, տեսա, հաղթեցի
2) Եկա , լսեցի, հաղթեցի
3) Եկա, նայեցի, հաղթեցի
4) Եկա, խոսեցի, հաղթեցի

52 **Նշված տարբերակներից ո՞րն է ճիշտ:**

«Աշխարհը կփրկի …». շարունակել միտքը, ընթերցելով մատնախոսությունը:



1) Բարեկեցությունը
2) Գեղեցկությունը
3) Համեստությունը
4) Խոհեմությունը

53 **Որ՞ն է Ա մատնաձևին պատկանող ժեստը**

1) Բարկանալ
2) Տխրել
3) Հանգստանալ
4) Ուրախանալ

54 **Տարվա եղանակները պատկերող ո՞ր ժեստում չկան Վ մատնաձև։**

1) Գարուն
2) Ամառ
3) Աշուն
4) Ձմեռ

55 **Նշվածներից ո՞ր նախադասությունն է արտահայտվում մեկ ժեստով։**

1) Արևը մայր է մտնում։
2) Արևը փայլում է։
3) Երկինքը անամպ է
4) Երկինքը աստղաշատ է։

56 **Նշվածներից ո՞ր նախադասությունն է արտահայտվում ժեստային իդիոմով։**

1) Համբերության բաժակը լցվեց։
2) Համբերությունը կյանք է։
3) Համբերողը միշտ շահում է։
4) Համբերությունը ուժեղներինն է։

57 **Ո՞ր երկրի ժեստային անվանումն է նկարագրված. 2 ձեռքի Ֆ մատնաձև-ձեռքերը շրջանաձև շարժել տեղում։**

1) Ֆրանսիա
2) Ֆինլանդիա
3) Ավստրիա
4) Ավստրալիա

58 Ո՞ր բառի ժեստային անվանումն է նկարագրված. 2 ձեռքի U մատնաձև-աջ ձեռքը շարժել դեպի վերև՝ դարձնելով Ժ մատնաձև:

1) Պետություն
2) Ստորագրություն
3) Ընտրություն
4) Իրավունք

59 Տրված ժեստերից ո՞րը ունի միայն մեկ նշանակություն:

1.

2.

3.

4.

60 Տրված ժեստերից ո՞րը չի համապատասխանում նշված նշանակությանը. Ընթերցել մատնախոսությունը և նշել ճիշտ պատասխանը.



1.

2.

3.

4.